ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ

# ԱՐԱՔՍ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 250 ՌՈՒԲԼ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐ

## Շնորհաւոր Նոր Տարի



## 1993

Ուրախ Նոր Տարի, շատ ժպիտներ եւ քաղցր օրեր աշխարհի բոլոր երեխաներին։

# ԲԱՐԵՒ

Երբ հանդիպում էք իրար, կամ մտնում էք
որեւէ տեղ ձեր առաջին խօսքն է՝
«Բարեւ ձեզ» : Դուք ձեր բարեւով մարդկանց
բարին էք ցանկանում: Երբէք չմոռանանք
բարեւ տալ:





# ԱՄԱՆՈՐ

Ի՜նչ լաւ օր ես, ինչ լա՜ւ օր,
Ճերմակզգեստ Ամանոր,
Լուսնի ճամբով ես եկել,
Կապոյտ ծովերն ես ճեղքել,
Անց ես կացել սարերով,
Մութ անտառով, խոր ձորով,
Ճերմակ ձիւներն ես կոխել,
Մարդկանց տարին ես փոխել,
Տուն ու խանութ ու կրպակ
Փայլ են առել ցոլքիդ տակ:
Խնդումներես, խնդագին
Ո՜նց է թնդում մեր հոգին...
Վառ լոյսերով ու երգով
Ողջունում ենք քեզ այսօր.
Ճերմակզգեստ Ամանոր,
Ժպտա՛, դու մեզ ամեն օր:



Արամ Գառօնէ



# Առաջին փաթիլները

Նազ ու տուզով,—օրօրուելով.
Իրար կողքի, թեւանցուկ,
Փաթիլները ճամբայ ընկան
Օդի միջով կամացուկ,
Թեթեւ - թեթեւ իջնում են վար՝
Պտտուելով անդադար,
Պարեն գալիս- խաղում անվերջ
Լայն ու արձակ օդի մէջ:
Ամպը գոչեց. «Արագ իջէք,
Իմ սիրելի բալիկներ,
Չգիտէ՞ք, որ կարօտ են ձեզ
Այնքան փոքրիկ մանուկներ»:
Փաթիլները զուարթացան,
Թեւին տուին ու անցան,
Մէկիկ-մէկիկ գետին իջան,
Իրար գրկած ձիւն դարձան:
Մանուկները դուրս վազեցին,
Առած սահնակ ու սղղան,
Եւ սկսեց երգ ու ծիծաղ,
Զուարթ խաղերը ձմռան:



Հայրապետ Հայրապետեան

Ա՛յ ծտի ճուտ, ա՛յ անդոչ,
Ուսիս նստած, հիւր անկոչ,
Ե՞րբ հասցրիր թեւ առնել,
Մանչուկներին ծեռք առնել,
Թէ՛ այ տղայ,—լուրջ մնա,
Նկարելու եմ հիմա:

Քնարիկ Ղազարեան



Լուսանկար ԼԵՒՈՆ [illegible]

# Ծիտիկներ

Ինչքան շա՜տ են ծիտիկները,
Հազար հատ են ծիտիկները...
Ձիւն-ձմեռին,
Ծառի ծէրին.
Թռի-վռի են անում,
Անվերջ կռիւ են անում:

Բա չե՞ն մրսում ծիտիկները,
Նրանց բոբիկ տոտիկները...
Ծւծւում են
Ճիկ-ճիկ անում,
Մի տեղում չեն
Տիտիկ անում:

Բա բուն չունե՛ն ծիտիկները
Բա տուն չունե՞ն ծիտիկները:
Ելնեմ կուտ տամ.
Ծիտիկներին,
Մի օգնուտ տամ
Ծիտիկներին...

Ինչքան շա՜տ են ծիտիկները,
Միլիոն հատ են ծիտիկները:

*Սաղաթել Յարութիւնեան*




*Սահնակով բլրակից ցած է սահում Արմէնը։*
*Կարէնն ու Յասմիկը ներքեւում կանգնած են*

Յասմիկ- Կը տա՞ս քշենք։

Արմէն- Էդ էր պակաս։

Կարէն- Գոնէ մէկ անգամ սղղանք։

Արմէն- Չէ՜-է։

Կարէն- Ինչ ժլատն ես։

*Մօտենում է Ձմեռ պապը։*

ՁՄԵՌ ՊԱՊ (Շփոթւած)- Ծերացել եմ, մոռացկոտ եմ դարձել, չեմ յիշում, թէ պարկս ու՞ր եմ թողել։ Դուք, պատահաբար, չէ՞ք տեսել։

Կարէն (Զարմացած)- Ոչ։

Արմէնը երկու ձեռքով պինդ բռնել է սահնակը։

Յասմիկ- Իսկ պարկի մէջ նւէրներ կայ՞ին։

ՁՄԵՌ ՊԱՊ- Դատարկ էր։ Բոլոր նւէրները Նոր Տարւայ գիշերը բաժանել պրծել եմ։

Կարէն- Դէ ոչինչ, մեծ բան չի կորել։

ՁՄԵՌ ՊԱՊ- Ինչպէ՞ս թէ մեծ բան չի։ Հասարակ պարկ չի կորել, այլ կախարդական։ Ամէն Նոր Տարի պարկը ինքն իրեն լցւում է խաղալիքներով ու քաղցրաւենիներով։

Յասմիկ- Հիմա ի՞նչ պիտի անենք։

ՁՄԵՌ ՊԱՊ- Օգնէք, պարկը փնտռել, ես յուսով կը վերադառնամ։ (գնում է)

Կարէն- Գնանք փնտռենք։

Արմէն- Ես սղղում եմ։ Դուք փնտռում էք՝ փնտռէք։

Յասմիկ- Արի, Կարէն։ Առանց Արմէնին էլ գլուխ կը հանենք։

*Երեխաները փնտրում են փողոցում, բակերում, նայում են պատուհաններից ներս։*

Յասմիկ (Հոգոցով)- Ոչ մի տեղ չկայ։

Կարէն- Ահա թէ որտեղ է։ (Ինչ-որ մէկի բակից լսւում է նրա ձայնը եւ քիչ անց յայտնւում է Կարէնը, մեծ տոպրակ ձեռքին)։ Գտայ։ (Նրա հետեւից վազում է մի պառաւ կին)։

Ի՞նչն է զարդարում
Տարուայ մէջ մի օր,
Թէեւ աշխարհում,
Զարդ է փառաւոր:



Շաքարի պէս ճերմակ է,
Դաշտին - ծովին վերմակ է:



# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ



Խոր անտառում
Բոյն գտաւ,
Ողջ ձմեռը
Քուն մտաւ,
Գարունն եկաւ՝
Վերկացաւ,
Քուրքը հագին
Հեռացաւ:



Բերում եմ ձեզ ցուրտ օրեր,
Ճերմակ ներկում դաշտ ու ձորեր,
Բերում եմ ձեզ խաղեր պէս-պէս,
Դու ասացէք թէ ով եմ ես:

Պառաւ Կին- Այ անպիտան, ինչու՞ իմ գետնախնձորի պարկը թոցրիր...

Կարէն (Կանգ առնելով)- Գետնախնձորի՞... Եթէ այդպէս է, վերցրէք։ (Պարկը մեկնում է պառաւ կնոջը)։ Ես կարծեցի, թէ կախարդականն է։

Պառաւ Կին- Ո՞նց թէ կախարդականը։

Յասմիկ- Ձմեռ պապը այստեղ կորցրել է իր պարկը։ Կարէնն էլ կարծել է, թէ սա հենց նրանն է։ Եթէ մենք չգտնենք պարկը...

Կարէն- ... Երեխաները միւս Նոր Տարուն առանց նուէրների կը մնան։

Պառաւ Կին- Բայց ո՞վ թագցրած կը լինի։ Երեւի նա, ով չի մտածում ուրիշների մասին եւ բոլոր նուէրները ուզում է իրեն պահել։ Ճի՞շտ է։

Յասմիկ- Ճիշտ է... Դա երեւի ժլատ ու անազնիւ տղայ է կամ աղջիկ։

Կարէն (Կենտրոնացած մտածում է) Իսկ եթէ Արմէ՞նն է։ (Վազում է բակ, որտեղ Արմէնը դեռ սահում է)։ Պարկը մօ՞տդ է։

Արմէն (Նստելով սահնակին)- Ինձ մօտ ոչ մի պարկ չկայ։

Կարէն- Վերադարձրու, թէ չէ վատ կը լինի։ (Հրում է նրան սահնակի վրայից։ Զարմացած վերցնում է սահնակին դրած պարկը)։ Իսկ սա ի՞նչ է։

Արմէն- Սա՞... որ տաք լինի։

Կարէն (Բղաւելով)- Շուտ եկէք այստեղ։

*Գալիս են Յասմիկը, պառաւ կինը եւ Ձմեռ պապը։*

Կարէն- Ահա՛ պարկը։ Ձմեռ պապ, սա քո՞նն է, կախարդակա՞նն է։

ՁՄԵՌ ՊԱՊ- Իմն է, իմն է, փոքրիկս։ Որտե՞ղի՞ց գտար։

Արմէն (Հեկեկալով)- Դուք ցած էիք գցել, ես բարձրացրի։

Յասմիկ- Նա պահել էր, որ բոլոր նուէրները իրեն վերցնի։

Պառաւ Կին- Նրան պատժել է պէտք։

Յասմիկ- Ձմեռ պապ, Արմէնը էլ չի անի, առաջին անգամն է, ներէք նրան, հա՞։

ՁՄԵՌ ՊԱՊ- Լաւ, եթէ խնդրում էք, ներում եմ։ Ցտեսութիւն, երեխաներ, մինչեւ յաջորդ Նոր Տարի։

(Բոլորը կանչում են. «Ցտեսութի՜ւն». Ձմեռ պապ)։

*Ալլա Տէր. Յակոբեան*

# ԽԱՉԲԱՌ




1- Ընտանի կենդանի է:
2- Այս ծառի տերեւից է սնւում շերամը:
3- Այո չէ:
4- Նեղ բառի հականիշը
5- Տարուայ առաջին ամիսը:
6- Նրա կրկնութիւնը կըլինի մայրիկ:
7- Տարուայ եղանակներից է:.
8- Ձմռան սառեցնում է ձեր ձեռքերը:
9- Ձմեռային միրգ է:





## Օգնեցէք Թռչուններին

Ձիւն-ձմեռ է: Ցուրտ է: Ձիւնը ծածկել է բոլոր փողոցները, բակերը, ծառերը:

Սիրելի երեխաներ, ձեր տան բակում կամ կտուրում, մի բուռ հացահատիկ ցրելով կամ կարդոնէ, փայտէ տուփեր դնելով օգնէք թռչուններին: Դա կը լինի ձեր կողմից Նոր-Տարուայ ամենալաւ նուէրը նրանց:

## Ինչո՞վ են տարբերւում



# Ձիւնի Փաթիլ

Դուք կարող էք թիւ 1-ից մինչեւ 7-ի նկարները ուշադիր հետեւելով, պատրաստէք մի ձեան փաթիլ:

Այս գործի համար պիտի օգտուէք քառանկիւն թղթից եւ աւելի գեղեցիկ լինելու համար արծաթագոյն փայլուն թղթից:

Թիւ 6 նկարից յետոյ, երբ ստացաք եռանկիւնի թուղթ, կարող էք նրա վրայ նկարել Ա. եւ Բ. եռանկիւնու նախշերը եւ գունաւոր մասերը մկրատելով, ուրիշ նմուշներ ձեռք բերել:







Այժմ կարող էք փաթիլները թելերով կախել ձեր սենեակում, դասարանում....

Ի՞նչ կենդանիներից է կազմել այս
երևակայական արարածը ...



Պատասխան

Մէկ հպումով գծէք այս պատկերները եւ [illegible] ...սին
բաժանէք 6 հաւասար եռանկյուն[illegible]





Տարւայ չորս եղանակները



Ձմեռ պապին ի՞նչ նուէր է բերել Լիլիթին:



Կարմիր գոյնով ներկուած իրերի անունների վերջին տառերը միացրու եւ կիմանաս:

Պատասխան

Տիկնիկ

# ՆԿԱՐՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ



Վարանդ Հայրապետեան - 12 տարեկան
…այիրի դպրոց



Անիլգա Ալեխսանեան- 5 տարեկան



Անետ Մելքոնեան- 5 տարեկան



Վահէ Ծառուկեան- 7 տարեկան



Սեւան Ղադիմեան
7 տարեկան



Վահագն Բաղումեան- 5 տարեկան

## ՑՏԵՍՈՒԹԻՒՆ

Երբ հեռանում ենք իրարից, կամ թողնում մի տեղ, ցտեսութիւն ենք ասում: Այսինքն իրար ողջութիւն ենք ցանկանում մինչեւ միւս տեսութիւնը եւ հանդիպումը: Միշտ յիշէք ցտեսութիւն ասել:

### Նոր Տարի

[illegible]




**ԱՐԱ-ՔՍ**

ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՐՏՈՆԱՏԷՐ
ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՀԱՍՑԷ ՓՈՍՏԱՐԿՂ
16765-1336
ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ

**ماهنامه آراکس**

فرهنگی،اجتماعی،ادبی
زیرنظر: یعقوب گریگوریان
آدرس: ایران، تهران
صندوق پستی ۱۶۷۶۵/۱۳۳۶
چاپ: چاپخانه رز